ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երեք միաբան Հայրերի վարդապետական թեզերի պաշտպանությունը:

Տ. Շահե արքեպս. Աճեմյանի նախագահությամբ քննիչ հանձնախումբը «Խոսք և ներշնչում» թեմայով թեզի համար ծայրագույն վարդապետական աստիճան շնորհեց Տ. Մյուռոն վարդապետ Գրվրգյանին: Մասնավոր վարդապետական աստիճանի արժանացան Սևանի Վազգենյան Դպրանոցի տեսուչ Տ. Բագրատ աբեղա Գալըստանյանը՝ «Հիվանդաց օծման խորհրդի խնդիրը Հայ Եկեղեցում», և Տ. Աշոտ աբեղա Մնացականյանը՝ «Անառակ որդու առակը հայ մեկնողական գրականության մեջ», թեզերի համար:

Հայ Եկեղեցում վարդապետության աստիճան շնորհվում է աստվածաբանական ոլորտում գիտական ուսումնասիրություն կատարած կուսակրոն քահանաներին, որոնց տրվում է քարոզելու, Ս. Գիրքը և Եկեղեցու դավանանքը մեկնելու իշխանություն: Ինքը՝ **վարդապետ** բառը նշանակում է **ուսուցիչ**: Վարդապետությունն ունի տասնչորս աստիճան, որոնցից առաջին չորսը մասնավոր վարդապետության աստիճաններն են, իսկ մնացած տասը՝ մեծ կամ ծայրագույն վարդապետության:

Մարտի 16-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի ունեցավ Ծայրագույն վարդապետական և մասնավոր վարդապետական աստիճանների տվչության արարողությունը՝ ձեռամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի և Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանի:

Ինչպես Ձեռնադրության Մաշտոցում է ասվում, վարդապետական աստիճանի տվչության ներկայիս կարգը սահմանել է Հայ Եկեղեցու եռամեծար վարդապետներից Ս. Գրիգոր Տաթևացին: Եկեղեցական արարողության ընթացքում նորընծա վարդապետներին կտրվեն օձագլուխ գավազաններ՝ իբրև վարդապետական աստիճանի և իմաստության խորհրդանիշ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ